

Ա. Տ. ՂԱՆԹԼԱՆՑՈՒ

ԼԵՆԻՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հետհոկտեմբերյան շրջանի բանահյուսության մեջ հիմնական ու կարևոր տեղ են գրավում Լենինին նվիրված ստեղծագործությունները: Անպաճույճ ու պարզ խոսքով, բանաստեղծական, վիպական անբռնազբոս ձևերի մեջ, ժողովուրդն այդ ստեղծագործություններում պատմում ու երգում է իր նոր կյանքը կերտողի հերոսական, անձնուրաց աշխատանքի, նրա կատարած պատմական մեծ գործի մասին:

1.

Հարուստ ու բազմազան է սովետահայ բանահյուսության Լենինյան ստեղծագործությունների բաժինը: Այստեղ մենք գտնում ենք թե՛ քնարական և թե՛ վիպական բնույթի չափածո ու արձակ մի շարք գործեր: Ժողովրդական մեծ ու փոքր երգերի ու խաղերի կողքին, կան զանազան զրույցներ, ավանդություններ, հեքիաթներ ու ասքեր. գուսանական տալբեր տիպի տաղերի (ղաստան, մուխամմազ) հետ միասին, աչքի են ընկնում նաև գյուղական ու քաղաքային ինքնուս հորինողների նորատիպ ուսանավոր-ասմունքները:

Վերոհիշյալ ստեղծագործությունները տարիների ընթացքում հայտնաբերվել ու գրի են առնվել Հայաստանի Պատմության և Գրականության ինստիտուտի, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության ինստիտուտի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի, Արվեստի ինստիտուտի, Հայաստանի Ժողովրդական ստեղծագործության տան համապատասխան բաժինների աշխատակիցների, ինչպես նաև անհատ բանահավաքների կողմից: Այդ ստեղծագործությունների մեծ մասը տարբեր ժամանակ, հրատարակվել է թե՛ առանձին ժողովածուներով և թե՛ պարբերական մամուլի էջերում: Պետք է առաջին հերթին հիշատակվի 1936 թ. լույս տեսած՝ «Լենինը հայ ֆուկլորի մեջ» անդրանիկ ժողովածուն¹, որը խմբագրական ազավաղումներով վերահրատարակվեց 1937 թ. «Լենինը հայկական ֆուկլորում» վերնագրով: Լենինին նվիրված բանահյուսական արժեքավոր նյութեր կան նաև՝ «Հայկական խորհրդային ֆուկլորը» (1938 թ.), «Հայ աշուղներն ու ասացողները Հայրենական պատերազմի օրերին» (1943 թ.), «Գուսանական և ժողովրդական երգեր» (1949 թ.) ժողովածուներում, «Սովետական Հայաստան» օրաթերթի, «Գրական թերթի», «Սովետական գրականություն» ամսագրի զանազան համարներում և այլուր:

¹ Ժողովածուն տպագրության է պատրաստվել ՀՍԽՀ Պատմության և Գրականության ինստիտուտի կողմից, խմբագրություն և ներածություն Կ. Մելիք-Օհանջանյանի, աշխատակցությամբ՝ Թարվերդյանի և Ա. Ղանալանյանի Պատ. խմբ. պրոֆ. Հ. Գյուլիքեխյանի:

Ըստ ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության՝ Լենինը դա-
րեր շարունակ «ծով աշխարհի» մեջ «ծարավ» ապրած աշխատավոր մարդկանց
ծարավը հագեցնող զովարար աղբյուրն է:

«Աշխարհը մեծ ծով էր,
Մենք մեջը ծարավ.
Լենինի գործերով,
Տեսա՞ք՝ ինչ գառավ:
Դործերիդ մատաղ, Լենին ջան, գործերիդ.
Խոսքերիդ մատաղ, Լենին ջան, խոսքերիդ»¹:

Լենինը աշխարհի մեջ առաջին բանվորագյուղացիական պետության կա-
ռուցողն է: Իր հավատարիմ զինակիցների հետ, նա մահու և կենաց գոտեմար-
տերում տապալում է կալվածատերերի ու գործարանատերերի իշխանությունը
և տեղը հաստատում բանվոր-գյուղացիական կառավարություն:

«Լենի քեց քոխվա, գզիր.
Լենինո, Լենինո.
Քյասիր ապրի՛, քեզի իզին.
Լենինո, ջաա՛նինո»²:

Լենինը բուլճարիկների պարտիայի ստեղծողն է, նրա հմուտ ու փորձված դե-
կավարը: Իր գիտակցական ողջ կյանքը նա նվիրաբերել է այդ պարտիայի
կազմակերպման ու ամրապնդման գործին, անողոք ու հետևողական պայքար
մղելով ամեն տեսակի թշնամիների ու դավաճանների դեմ:

«Մասսար ըմ կեր, անուն ուր մալուրիկ.
Լանին անունը դինրաշին ի:
Վով անունը խետ ի, զուր մալ կես կ'ենի խրտ ուրիշաց.
Մալուրիկ, գյուվա՛ ըղմալ էնա խրտ ուրիշաց շիրիգ»³:

Լենինը աշխատավոր ժողովրդի իսկական լուսավորիչն է, խավարի ու տգի-
տության մեջ երկար ժամանակ խարխալած մարդկանց ուսման ու կրթության
գործի կազմակերպողը, երեկվա բատրակին ու նոքարին գրագետ և «ուսու-
մով» դարձնողը:

«— Տղա՛ հաշո, խո րած հաշո,
Քյո անտաշ, զրո շարժումի տեղ.
Էտա օսըմ, կիտնակըթոն
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե:
— Էտա օսըմ, կիտնակըթոն
Լենին ի տվե, վո՞վ ի տվե»⁴:

Մեծ է Լենինի դերը Սովետական Միության ժողովուրդների, այդ թվում
նաև հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական վերածնունդի գործում: Նրա
անվան հետ են կապված Հայաստանի ջրատուր զաշտերի ոռոգման աշխա-
տանքներին, մասնավորապես ժողովրդի «մուրազը» հանդիսացող Շիրակի հրո-
շակավոր ջրանցքին նվիրված լավագույն ստեղծագործությունները:

¹ «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, էջ 86:

² Նույն տեղում, էջ 74:

³ Նույն տեղում, էջ 120:

⁴ Նույն տեղում, էջ 69:

«Լենինից էկավ հրաման,
Կապսի կողը էրին դաման,
Ջուր հանելու դրին գյուղման,
Ասենք՝ կեցցե՝ Շիրկանալը...»¹

Լենինի անվան հետ են կապված Հայաստանի գյուղերի էլեկտրիֆիկացման աշխատանքներին նվիրված երգերը, ուր արձագանք է գտել լենինյան հայտնի նշանաբանը էլեկտրիֆիկացիայի խոշոր նշանակության ու դերի մասին:

«Էլեկտրականն էկավ մեր խավար գեղը.
Բերին սունը տնկին գեղի մեջտեղը.
Ենդը շափաղ տվեց Լենինի լուսը,
Սավետը կատարեց քյասիթի հուսը...»²

Լենինյան երգերի, խաղիկների, զրույցների, ասքերի ու հեքիաթների հորինումն ու կատարումը, սկիզբ առնելով նրա կենդանության օրով, շարունակվում է նաև հետագայում—նրա մահվանից հետո:

Ժողովրդական լայն շրջանների վրա խորը և անջնջելի ազդեցություն է գործում նախ Լենինի մահը, առիթ հանդիսանալով բազմաթիվ սրտառուչ ու հուզիչ երգերի ստեղծման:

«Իրիկվա կողմ էր, վերեն ձուն կուգար,
Ռադիոն կխոսեր,— տխուր լուր կուտար:
Լենինը մեռավ, Լենինը մեռավ.
Աման տղերք, աման, էս ինչ բան եղավ...»³

Դառն կսկիծով ողբալով իր մեծ կորուստը, ժողովուրդը, այնուհետև, խորապես տողորված Լենինի մեծ գործի անմահության զաղափարով, անդադար հիշում է նրան և նորանոր երգեր ու զրույցներ ստեղծում նրա մասին:

«Բեն աշխարհում մահ ու մեռ կա,
Քեզ պես մեռնողը անմեռ է.
Էդ հրմենին գործդ վկա.
Ջարթնի՛ր Լենին, քեզ մահ չկա...»⁴

Լենինի անմահության մասին վերահիշյալ ամբողջական հիման վրա էլ ժողովրդական դուսաններն ու ասացողները հորինում են ստեղծագործություններ, որոնց մեջ նա հանդես է գալիս իբրև հզոր մի ուժ, անձնավորված ու սիմվոլացված ավանդական բանահյուսության հատուկ կերպարների ու պատկերների մեջ: Բնորոշ է այս տեսակետից Հայրենական պատերազմի շրջանում ստեղծված ժողովրդական մի փոքրիկ զրույց, որի մեջ պատմվում է այն մասին, թե ինչպես Լենինի շքանշանը պատերազմի դաշտում անխոցելի է դարձնում այն իրեն կրծքին կրող ռազմիկին, ամեն անգամ հեռու վանելով նրանից թշնամու զնդակները:

Ահա թե ինչ է հաղորդում զրույցը պատմող, նախկին մարտիկ-բանասացը: «Մեր գնդի զինվորներից մեկը Լենինգրադի տակ Լենինի օրդեն ստացավ: Հենց Օրդենը դռնիցս կախեցի թե չէ,— ասում է նա,— գնացի կռիվ: Ինչքան էլ

¹ «Հայկական խորհրդային ֆուկլորը», Երևան, 1938, էջ 88:

² Նույն տեղում, էջ 86:

³ «Գուտանական և ժողովրդական երգեր», Երևան, 1949, էջ 6:

⁴ Տե՛ս «Գրական թերթ», 1938, № 18:

որ դժվար տեղ ընկնէի—վախ չունէի. գնդակները, որ գալիս էին վրաս, օրդենը քաշում էր իրեն, ուժահան անում, քցում ցած: Մենակ մի անգամ ես թեթեւ վիրավորվեցի. բուլղա հանել էի շորացնելու, Լենինի օրդենն էլ շինելիս դրայանումն էր մնացել: Դրանից հետո, քանի կովի գնայի օրդենը դռնիցս չէի հանի, ինչ տեսակ գնդակ էլ որ գար վրաս, թրմփալով ընկնում էր գետին»¹:

Ժողովուրդը Լենինին հիշում է ո՛չ միայն իր առաջ ծառացող դժվարությունների ժամանակ, այլ նաև հաջողությունների պահին, հոգեկան մեծ պահանջ զգալով բաժանելու նրա հետ իր ուրախությունը:

— «Քաղաք ու գյուղ զարգացել են,
Օրենքներից ամրացել են,
Զավակներից մեծացել են,
Զարթի՛ր, ո՛վ պաշտելի Լենին
Զարթի՛ր, տես բո զավակներին...»²:

Հայ ժողովրդի հոգեկան անխզելի կապը Լենինի հետ ցայտուն կերպով արտացոլված է «Լենինի արձանը» վերնագրով գուսանական մի տաղի մեջ: Իր գուսանի բերանով դիմելով Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնում Լենինի հիշատակին կանգնեցված հույակապ արձանին, ժողովուրդն ասում է.

«Մեծ արձանդ է կանգնել, Լենին,
էն Արարատ սարի նման.
Լույս է տվել Երևանին,
Լալ-ջավահիր քարի նման...»³:

2.

Լենինի մասին հայ ժողովրդի հորինած բազմաթիվ ու բազմազան բանահյուսական ստեղծագործությունների շարքում, թե՛ իր գաղափարական բովանդակությամբ և թե՛ գեղարվեստական արժանիքներով առաջնակարգ տեղ է գրավում Արևմտյան Հայաստանի խիզանի շրջանից գաղթած զգրար Սաղկի Սեփոյին վերագրվող «Լենին փաշա» հայտնի «նաղլը», որը, գրի առնող բանահավաքի (Գ. Թարվերդյան) վկայությամբ, ստեղծվել է 1922—1924 թթ.⁴, Ասում ենք վերագրվող, որովհետև կարծիքներ են եղել, որ դա ուրիշի ստեղծագործություն է: Ով էլ որ լինի սակայն «Լենին փաշայի» հեղինակը, դրությունը չի փոխվում: Նրա հայացքները բխում են հայ ժողովրդի տվյալ շրջ-

¹ Գրի է առել Ս. Խանգադյանը 1946 թ. Զանդեղուրում, Բ. Մուսայելյանից: Առաջին անգամ տպագրվել է «Ленин и Сталин в армянском народном творчестве» ռուսերեն ժողովածուի մեջ, Երևան, 1952, էջ 56:

² Ասել է ինքնուհորինող Տ. Օհանյանը (74 տարեկան, Կիրովականի շրջանից): Ժողովրդական ստեղծագործության տան նյութերից: Առաջին անգամ տպագրվել է վերահիշյալ ռուսերեն ժողովածուում, էջ 31:

³ «Գուսանական և ժողովրդական երգեր», Երևան, 1949, էջ 9:

⁴ Այն առաջին անգամ լույս է տեսել 1936 թ., «Լենինը հայ ֆուկլորի մեջ» բանահյուսական ժողովածուում (էջ 125—138), և ապա, բազմիցս, տպագրվել ղանազան ժողովածուների մեջ և առանձին գրքուկով: Նույն 1936 թ., ՍՍՄՄ Գիտությունների ակադեմիայի Մարդաբանության, ազգագրության և հնագիտության ինստիտուտի «Советский фольклор» վերնագրով հոգավածների ու նյութերի ժողովածուում (№ 4—5, էջ 69—76) լույս է տեսնում «Լենին փաշա»-ի առաջին ռուսերեն տողացի թարգմանությունը (թարգմ. Կ. Մելիք-Օհանջանյանի), իսկ 1938 թ. «Պրավդայի» խմբագրության հրատարակած «Творчество народов СССР» ժողովածուում (էջ 18—25), տպագրվում է նրա ռուսերեն երկրորդ բանաստեղծական թարգմանությունը:

ջանի պատմական կեցությունից և հարազատորեն արտացոլում են վերջինիս մտաշխարհը. իսկ նրա ստեղծագործությունը աչքի է ընկնում Լենինի պատմական գերի բուն ժողովրդական ըմբռնման ճշմարտացի վերարտադրությամբ և ավանդական բանահյուսությանն հատուկ արտահայտչական միջոցների վարպետ օգտագործումով:

«Լենին փաշայի» թեման Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունն է: Նրա սյուժեն կազմում են հեղափոխության հետ կապված իրական-պատմական դեպքերը, վերջինիս մասնակից դեմքերը, այն ահեղ գոտեմարտը, որ մղել են Ռուսաստանի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը ցարիզմի դեմ «խավսարական» կարգեր հաստատելու համար:

«Լենին փաշայի» հերոսը՝ ինքը աշխատավոր ժողովուրդն է — «Աշխարհի զուրկ, սիրտը վառված մարգեր»: Լենինը, իր, տարբեր ազգերի ներկայացուցիչ հավատարիմ ղինակիցներով այստեղ հանդես է գալիս իբրև ժողովրդի ձրգտումների ամենամեծ արտահայտիչը, նրա պայքարի առաջնորդն ու հաղթանակի կոողը:

«Լենին փաշայի» գաղափարական բովանդակության հիմնական մոտիվներն են՝ աշխատավոր ժողովրդի ազատասիրական ձգտումները, ներքին ու արտաքին թշնամիներին ոչնչացնելու նրա անհողողող կամքը, ժողովուրդների բարեկամության ու ազգային համերաշխության ջատագովությունը:

«Լենին փաշան» էպոս չէ այս բառի սովորական իմաստով, ինչպես, սխալ կերպով, գործածել են և շարունակում են գործածել ոմանք: էպոսը կամ ժողովրդական վեպը, ինչպես հայտնի է, բնության և հասարակական կյանքի երևույթների գերազանցապես դիցաբանական ընկալման ու վերարտադրման արդյունքն է: էպոսն, այնուհետև, ծավալուն ստեղծագործություն է. այն ենթադրում է բազմազան ու հարուստ սյուժե, պատմական, առասպելական, կենցաղային և այլ մոտիվների համակցում, պատմական դեպքերի ու դեմքերի շփոթում, ժամանակագրական խախտումներ և այլն: Իսկական էպոսի տիպիկ օրինակներից մեկն է ավանդական հայ բանահյուսության գլուխգործոց «Ուսնա ծոերը» կամ «Սասունցի Դավիթը»: «Լենին փաշան» այս տեսակետից բոլորովին տարբեր տիպի ստեղծագործություն է: Այն ծավալով բավական փոքր է: Բնությունը համարյա բացակայում է նրա մեջ, իսկ հասարակական-քաղաքական կյանքի երևույթները՝ վերարտադրված են շատ ավելի իրապատում ու ճշմարտացի ձևով: Ժողովրդի աշխարհայացքի պատմական սահմանափակության հետ աղերսակցվող սնահավատական ու այլ կարգի որոշ մոմենտներ (աստծուն ուղղված փառաբանություն-աղերքի բանաձևը, «Ամենը», Լենինին ու նրա ղինակիցներին «փաշա» տիտղոսով հորջորջելը և այլն) սոսկ վերապրուկային մնացուկներ են: «Լենին փաշայի» սյուժեն բազմազան ու հարուստ չէ. այն զուրկ է նաև առասպելական ու կենցաղային մոտիվներից. պատմական դեպքերն ու դեմքերն այստեղ ներկայացված են ավելի հարազատությամբ, չկան ժամանակագրական մեծ խախտումներ: Ավանդական էպոսներից «Լենին փաշան» տարբերվում է նաև նրանով, որ այստեղ իբրև ղխավոր գործող անձ ու դեպքերի շարժիչ ազդակ հանդես է գալիս ոչ միայն ժողովրդի հավաքական ուժի մարմնավորում հերոսը, ինչպես այդ սովորաբար լինում է հին վեպերում, այլ նաև ինքը ժողովուրդը իր հերոսի հետ միասին: Մի կարևոր հանգամանք, որ նոր երևույթ է ժողովրդական բանավոր ստեղծագործության մեջ, և հետևանք է աշխատավոր մասշանների տարած համաշխար-

հային, պատմական մեծ հաղթանակի և սեփական դերի մասին նրանց ձեռք բերած նորոգ ճշմարտացի ըմբռնման: «Լենին փաշայի» կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ մինչդեռ հին վեպերի մեջ հերոսը սովորաբար ունի իր խոցելի տեղը, որից հարված ստանալով, ի վերջո, մեռնում է (այդպես են՝ Աբիլեսը, Դավիթը և շատ ուրիշներ), այստեղ («Լենին փաշայի» մեջ) հերոսն անխոցելի է: Վերահիշյալ տարբերությունը հետևանք է քննության առարկա ստեղծագործությունները ծնող ու սնող պատմական ժամանակաշրջաններում ապրող ժողովրդական մասսաների գիտակցության տարբերության: Ավանդական վեպերը, ինչպես հայտնի է, ստեղծվել են հեռավոր անցյալի ժանր պայմաններում, երբ ժողովուրդը զգում էր, որ դեռ չի հասել կատարյալ հաղթանակի ժամը և իր երազանքների մարմնացում վիպական հերոսները պետք է ունենային մի խոցելի տեղ, որտեղից և կշլատեր նրանց ոսոխը: «Լենին փաշան» ստեղծվել է մի այնպիսի պատմաշրջանում, երբ ժողովուրդն արդեն իրավազոր էր հաղթանակելու: Ուստի և նրա հերոսը (Լենինը) վերջնական հաղթանակ է տանում թշնամու նկատմամբ:

«Լենին փաշայի» բանահյուսական-վիպական նոր տիպի ստեղծագործություն լինելը երևում է նաև նրա զաղափարական բովանդակության մի քանի հատկորոշ կողմերից:

Հին վեպերի մեջ, ինչպես հայտնի է, գերազանցապես արտացոլված է աշխատավոր ժողովրդի ֆաղափական պայքարը, որն ուղղված է մեծ մասամբ օտար բռնության դեմ: «Լենին փաշայի» մեջ վերարտադրված է այն պայքարը, որ մղում է ժողովուրդն իր ներքին տերերի դեմ՝ հանուն սոցիալական ազատության. այլ խոսքով, պայքարն այստեղ ունի հիմնականում սոցիալ-դասակարգային միտվածք. ճիշտ է, այստեղ էլ տրված է նաև արտաքին թշնամիների («Ինգլիզի», «Ամբլյանի», «Ճայփունի», «Օսման-տաճիկի» և այլոց) դեմ մղվող կռիվը, սակայն այն ունի ավելի երկրորդական նշանակություն:

Հին վեպերի մեջ, սովորաբար, իր արձագանքն է գտել մեկ կոնկրետ ազգի կամ ժողովրդի մղած ազատագրական պայքարն իր ինքնորոշման համար: «Լենին փաշայի» մեջ միաժամանակ ու համատեղ պայքարի են դուրս գալիս մի շարք ազգեր (ցարիզմի տիրապետության տակ ապրող բոլոր ճնշված ժողովուրդները):

Հին վեպերի մեջ հերոսները պայքարի մեջ են մտնում, մեծ մասամբ, դիպվածի բերումով և կովում են տաբերային ուժի անսանձ մղումով: «Լենին փաշայի» մեջ հերոսը (Լենինը) գործում է հատուկ ծրագրով և հետապնդում է որոշակի նպատակներ: Ավանդական վեպերի հերոսների պես նա չի բավարարվում միայն թշնամուն ոչնչացնելով. այդ անելուց հետո նա ձեռնամուխ է լինում իր ծրագրի իրագործմանը:

«Լենին փաշան» մայրուրիկի արից զակուն:
Երկրի կարթ վերուց, Լրեց կուխն ի վեր:
Էն առաջվա զանգիներաց Լրից կատու,
Խից ամեն ինչ ծեռներուց, թողեց անտուն:
Էն առաջվա քասրեներաց Լրից փաշա,—
Ջրման մեկ-մեկ տատավոր են մըլ դիվանին...»¹:

Հին վեպերի մեջ սոցիալական հարաբերություններն ու դասակարգային պայքարը արտացոլված են տարբերային ձևով: «Լենին փաշայի» մեջ իր ար-

¹ «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, էջ 138:

տահայտությունն է գտել դասակարգային ինքնագիտակցության եկած աշխատավորության որոշակի ու պարզ հայացքը՝ դասակարգային շերտավորման, սոցիալական տարբեր բանականների փոխադարձ հակամարտության ու պայքարի վերաբերյալ:

«Հաշիւի մալ, գովյաթ, գո զրմմեն մոս զանգինաց.
Կայք, զկարողութեն, գո զրմմեն մոս զանգինաց.
Վուսկի, զրմուք, գո զրմմեն մոս զանգինաց.
Յաղիրն ի, ըզուր էրկո տարտակ ծեռնիր...»¹

Ընթերցողի ու ցայտուն կերպով «Լենին փաշայի» մեջ տրված է նաև հարուստների ու աշխատավորության ռազմական ուժի սոցիալական բնութագրերը, մի բան, որ չկա ու չէր էլ կարող լինել հին վեպերի մեջ:

«Ջանդինաց զուրքի մե զրսմ էր՝ փարով վարցկան,
Ջանգինաց զուրքի մե զրսմ էր՝ շուխ պախված.
Ջանգինաց զուրքի մե զրսմ էր՝ վախկոս-ջանպախ,
Մե զրսմ լէ ուտար, անծանոթ մարթեր:

... էն վուր Լանին փաշի մարթեր ին, մեկ սիրտ, մեկ խորի.
Ջրմմեն էլ զրկված պանվորքտեր ին հախկատ.
Ջրմմեն էլ զրկված ըռպարքեր ին հախկատ.
Ջրմմեն էլ զրկված, անկուռ, խեղճ, հախկատ,
Հախշրի զուրկ, սիրտը վառված մարթեր...»²

Իր ձևական մի բանի կողմերով (փոքր ժավալը, քնարական տարրի առկայությունը, չափածո ու հանգավոր բնույթը) «Լենին փաշան» մոտենում է ժողովրդական վիպերգին, որի օրինակներն են հայ բանահյուսության մեջ՝ հայտնի «Մոկաց Միրզան», «Գրիգոր Նարեկացին», «Ասլան աղան» և նմանները: Սակայն, այն, բուն իմաստով վիպերգ էլ չէ, որովհետև շունի վերջինիս հատուկ երաժշտական եղանակը:

«Լենին փաշան» թե՛ իր ժանրային առանձնահատկություններով և թե՛ գաղափարական բովանդակությամբ բանահյուսական նոր տիպի ստեղծագործություն է: Այն սովետահայ բանահյուսության մեջ առաջ եկած ճեռոսական ասի կամ ժողովրդական պոեմի ցայտուն նմուշն է, որն աչքի է ընկնում իր քաղաքական նպատակասլացությամբ, պատմական իրականության (դեպքերի ու դեմքերի), դասակարգային հարաբերությունների հարազատ վերարտադրությամբ, վիպական լայն շնչով, մեծ թափով, զարմանալի հուզական ուժով ու պատկերավորությամբ:

«Լենին փաշան» ըստ արժանվույն համարվում է Սովետական Միության ժողովուրդների ժամանակակից բանահյուսության գոհարներից մեկը: Միանգամայն իրավացի էր այս առումով հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Ավետիք Բաազակյանը, երբ 1939 թ. Լենինի հիշատակին նվիրված իր մի հոդվածում գրում էր. «...Իսկ Ծաղկի Սեփույի «Լենին փաշա» նադիր կմնա բոլոր ժողովուրդների նորագույն ֆուկլորի մեջ մի չքնաղ կոթող և հայ ժողովրդի զգացմունքի ամենաճշգրիտ կոնկրետացումը»³:

Սովետահայ բանահյուսության լենինյան ստեղծագործությունների մեջ, «Լենին փաշայից» հետո, երկրորդ նշանակալից գործը սովետահայ ականավոր

¹ «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, էջ 129:

² Նույն տեղում, էջ 132:

³ Տե՛ս «Գրական թերթ», 1939, № 4:

գրող Ակսել Բակունցի «Մուրոյի զրույցը» պատմվածքում տեղ գտած ժողովրդական «զրույցն» է Լենինի մասին, որի հորինող-պատմողը, հեղինակի (Լակունցի) վկայությամբ Ալագյազի լանջի Մաղգա գյուղի բնակիչ, սասունցի «գաղթական» հովիվ Մուրոն է:

Քննության առարկա «զրույցը», որը գրի է առնված 1932 թ., դժբախտաբար, մինչև այժմ համապատասխան ուշադրության չի արժանացել սովետահայ բանագետների կողմից և իր պատշաճ տեղը չի գրավել Լենինին նվիրված բանահյուսական ժողովածուներում: Այդ մասին գրել են միայն սովետահայ գրականագետները՝ Բակունցի սքանչելի պատմվածքների վերլուծման ու գնահատության կապակցությամբ: Նրանցից մեկը (Ռ. Ջարյան) օրինակ, կասկածանքով ասում է, որ ինքը չգիտի՝ «թե այդ զրույցը հեղինակային մտահղացում է, թե՞ իսկապես» Բակունցը լսել է, գրի առել ու իր պարտքը համարել լույս աշխարհ բերելը¹: Մյուսը (Ս. Աղաբաբյան) ավելի վստահ ձևով խոսում է զրույցի «ֆոլկլորային ծագման», նրա՝ «հայ ժողովրդական բանահյուսության Լենինյան շարքի, մանավանդ «Լենին փաշա» վիպերգության հետ» ունեցած «գեղարվեստական կապի» մասին, գտնելով, որ՝ «Բակունցը առանց մի քայլ անգամ հեռանալու նախատիպից՝ Մուրոյից, լավ իմաստով ռեալություն է անգրագետ հովիվի «զրույցը» պահպանելով ոչ միայն ավանդության բառային հյուսվածքն ու յուրահատուկ կառուցվածքը, այլ նաև ասացողի խոսքի բնական ինտոնացիան»² (ընդգծումները մերն են — Ա. Ղ.): Խոսքն ուրեմն զրույցի «ֆոլկլորային ծագման», բանահյուսության հետ ունեցած «գեղարվեստական կապի» և նրա հեղինակային «ռեալորման» մասին է:

Սովետահայ բանագետների թյուրատեսության, իսկ գրականագետների էլ՝ կասկածանքի կամ արած որոշ վերապահության պատճառը հանդիսացել է այն հանգամանքը, որ հովիվ Մուրոյի «զրույցը» Բակունցի կողմից գրված է նրա հմայիչ արձակի նրբին թելերից հյուսված հեղինակային գեղեցիկ շրջանակի մեջ և վարպետորեն ձուլված է վերջինիս հետ, որը և, ըստ երևույթին, «խանգարել» է ճշտությամբ որոշելու այդ շրջանակի մեջ եղող բնագիր-նկարի ինքնությունը՝ իբրև ժողովրդական բանահյուսության մի թանկարժեք հուշարձանի:

Մեր խորին համոզմամբ Ակսել Բակունցի «Մուրոյի զրույցը» պատմվածքում տեղ գտած սասունցի հովիվ Մուրոյի պատումը Լենինի մասին, բուն ժողովրդական ստեղծագործություն է, մի փոքրիկ հեքիաթ-ավանդություն, որն ունի պատմա-ճանաչողական կարևոր նշանակություն: Բակունցը ոչ միայն անձամբ գրի է առել և ամենայն հարազատությամբ ու նույնությամբ մեջ բերել այն, այլև արժեքավոր ու ճշմարտացի տեղեկություններ է հաղորդել նրա ստեղծողի և վերջինիս միջավայրի մասին, դրանով իսկ կատարելով տվյալ նյութի արժևոր լավ իմացող ու գնահատող ներհուն ու հեռատես գրողի և բարեխիղճ բանահավաքի շնորհակալ դերը: Նա մոռացությունից փրկել է Լենինի մասին հայ ժողովրդի ստեղծած բանահյուսական լավագույն գործերից մեկը:

Ի հաստատումն մեր համոզման ավելորդ չենք համարում այստեղ տալու հետևյալ ծանոթությունը: Այս աշխատանքը վաղուց գրված, ավարտված էր և 1960 թ. ապրիլի 20-ին զեկուցված Լենինի ծննդյան 90-ամյակի առթիվ Մ. Արևելյանի անվան Գրականության ինստիտուտի կազմակերպած հորելյանա-

¹ Տե՛ս Ակսել Բակունցի «Երկեր»-ի առաջաբանը, Երևան, 1955, էջ 1X:

² Ս. Աղաբաբյան, Ակսել Բակունց, Երևան, 1959, էջ 124—125:

կան գիտական-սեփականում, երբ նույն թվի սեպտեմբեր ամսի 29-ին, «Ավան-գարդ» թերթի № 117-ում կարդացինք Ա. Ավագյանի և Ժ. Զոհրաբյանի «Մուրոյի զրույցը» տառիներ հետո» վերնագրով թղթակցությունը՝ գրված Աշտա-թակի շրջանի կենտրոն (նախկին Մաղդա) գյուղից։ Այդ թղթակցությունից պարզ է դառնում, որ. ա) Բակունցի պատմվածքում հովիվ Մուրոյի բերանից պատմված «զրույցը» կենինի մասին ո՛չ թե իր՝ հեղինակի հորինածն է, այլ բուն ժողովրդական մի պատում, որը 30-ական թվականների սկզբին իրոք տա-րածված է եղել Արագածի լանջի գյուղերի բնակիչ սասունցիների մեջ, և բ) «Մուրոյի զրույցը» բակունցյան պատմվածքի հերոս, Ալագյազի լանջի Մաղդա գյուղացի հովիվ Մուրոն բմածին մի անձնավորություն չէ, այլ իրական մի մարդ, որը մինչև հիմա էլ ողջ և առողջ է, ապրում և աշխատում է նույն գյու-ղում։ Վերևում ասվածը հաստատելու համար բերենք բառացի իր՝ Մուրոյի (իմա՝ Գևորգ Ավետիսյանի) հետևյալ վկայությունը, որ նա տվել է «Ավան-գարդի» հիշյալ թղթակիցներին։ «Կենինի անուն ես լե գիտեի, ըմ ախպեր լե գիտեր, հմեն լե գիտեին. հըմա էդ մարդը, որ ըն քյասիբ տարին կաստում էր խաքել, կնաց մնակ իմ անուն կյըրքի էտու»։ Եվ ապա. «Ըդ մարդիկ (խոսքը Բակունցի և նրա ընկերոջ մասին է—Ա. Ղ.), որ ընձի կենինի մասին հարցցին, ընունցմեն մեկը իմ ասածներ կկրեր, ես լե վխցա, որ ըդուք հարուստ կլնեն, գիքան ընձի կսպանեն, ըդուր համար լե, որ հարցուցին, թե քո անուն ինչ ի, խապցի ընունց, ասի՝ Մուրո»։

Քննության առարկա հեքիաթ-ավանդության մեջ, պատմական դեպքերի ու դեմքերի որոշ շփոթությամբ ու խախտումներով, վիպական և հրաշապատում զգալի երանգավորումով, վերարտադրված են լենինի կյանքի ու գործի հիմնական դրվագները։ Պատմությունը սկսվում է լենինի ազգային ու սոցիալական ծագման և նրա ուսումնառության մասին հաղորդվող հակիրճ տեղեկություններով «—լենին ուռուս էր։ Յուր հեր լե չքավոր էր, պապ լե. գնաց կարդալու, էս յան, էն յան, մի հուսումարան ռաստ եկավ, ասավ՝ չքավոր եմ, ինձի կառնե՞ք, կուզեմ կարդացվոր էղնիմ։ Առան մի քանի վախտ կարդաց, որ ուսում թամմեց, խելքի էկավ)»։

Շարունակության մեջ խոսվում է Հենինի մոտ հասունացող դասակարգային գիտակցության, հավատարիմ ընկերներին իր շուրջը համախմբելու, համատեղ ջանքերով միապետության դեմ պայքարի դուրս գալու նրա համոզված ու անդիշում պրոպագանդի մասին. «Որ խելքի եկավ, իմացավ, թե աշխարքի վնաս ուստից կեղնի: Մտածեց, մտածեց, տեսավ, որ վնաս ուռուսի թագավորից կեղնի: Թոփ արեց իրենց հուսումարանի տղոց, թե՝ ընկերներ՝ Հնքան որ կարդացվոր էք, իմա՛լ կեղնի, որ չբավոր դառը դատի, հարուստ ուտի, ինքը մնա չլուտ, սոված, ութ, մի կարկատած լեֆ լե շունի, որ մեք պառկի:

Հնկերներ ասին. եղեր, շեղեր է, էդպես եղեր է, էդպես լե մացել է, լենին ասավ. աշխարհն էդպես չի մնա, էսօր ամպ է, էգուց պարզ արև: Մինչի մենք ընկերություն չանենք զիրար, թագավոր լե մզի կմորթե, հարուստ լե մզի կճնշե, հող լե մզի շօգնի: Մկրատ իրեն է, կտոր լե իրեն է: Զուգը ուղիղություն կասեմ, որ մինչի թուր հարուստի բերան չառնի, պարզ խոսք չի ասի՞ս:

Այնուհետև պատմվում է այն մասին, թե ինչպես է ենթան հր ընկերների

¹ Ակսել Բաղդասարյան, *Երկեր, Երեսան, 1955, էջ 266.*

2 Նույն տեղում,

հետ կազմակերպություն են «սարքում», թե ինչպես թագավորի մի «հավատարիմ մարդու» մատնությունամբ 12 տարեկան լենինին «աքսորյան» են քշում, ինչպես լենինի եղբայր «Ալեքսան» լսելով նրա աքսորման լուրը, որոշում է «մորթել» բոլոր թագավորներին, ինչպես՝ նոր մատնությամբ «Ալեքսանը» թագավորի մոտ է տարվում և գլխատվում սրա կողմից: Իմանալով այդ մասին, լենինը «շատ արցունք է թափում», բայց չի վհատվում. ընդհակառակը, վրձնով լցված թագավորի դեմ, նա իր ընկերների հետ որոշում է զինել «չքավոր բանվորներուն» և գրոհել թագավորի պալատի վրա:

«Լենին ժողովք արեց, նամակ գրեց զմեծն չքավոր բանվորներուն, թե պատրաստ կացեք, էս ֆլան ամիս կռիվ կերթանք թագավորի վրա:

Առավ իր ընկերներ, իր զենք կապեց, էդ ֆլան ամիս լենին եկավ ուռուսի թագավորի պալատ: Կանչեց՝ ե՛լ, ես աքսորյան լենինն եմ: Ուժեղ կպան զիրար, շատ արյուն թափին: Լենինի թուր ճեղքեց թագավորի գլուխ, էրկու կես արավ, թագավորին տապալեց, էնոր տուն ու քուլֆաթ զարկեց, ջարդեց, լավ հողեր, լավ դուքըներ, ինչ որ թագավորն ուներ, զմեծն ոսկի, հարստություն բաժանեց չքավորներուն, ասավ՝ գնացեք ձեր քեֆին ապրեք... Չքավոր բանվորներ ուհաթցան: Լենին հավաքեց իր ընկերներ, ժողովք նստան, որոշում դրին, որ էլ կռիվ չեղնի: Ելավ մի բարձր քար ասավ.

— Ժողովուրդ, խաղաղ ապրեք... էլ մզի կռիվ չկա...

«Եղավ խորհրդային իշխանություն...»¹:

Սակայն թագավորի մահով խնդիրը չի լուծվում: Այ՛, անգամ գործի են անցնում «հարուստները»: Նրանք որոշում են մի հնարքով «ջնջել հողի երեսից» լենինին. ոսկով կաշառում են մի աղջկա, որը և գալով լենինի «գոլուր», կառք նստելիս, վիրավորում է նրան: Լենինի մարդիկ փնտրում, գտնում են այդ աղջկան կաշառող հարուստին և տրորում նրա «փոր-փսորը»:

Մուրոյի «զրուցը» վերջանում է լենինի հիվանդությամբ, նրա կտակով ու մահով:

«Մի քանի վախտ անց լենին հիվանդացավ: Որ հիվանդացավ, կանչեց իր ընկերներ, իր կնիկ, իր զորք, ասավ՝ ընկերներ, ես կմեռնեմ, իմ խրատներ, իմ խոսք կմնա աշխարհի երես:

Լենին մեռավ... Յոթ օր, յոթ գիշեր սուգ արին, տարան մի բարձր տեղ թաղին, որ արևուց մոտ եղնի...»²:

Ուշագրավ է լենինին բարձր տեղ թաղելու հանգամանքը: Այդ մոտիվը հավանորեն կապված է վաղնջական դարերի խորքից եկող ժողովրդական-դիցաբանական հավատալիքների ու պատկերացումների հետ: Հայտնի է, որ և՛ Հայաստանում, և՛ շատ ուրիշ երկրներում հսկաներին ու դյուցազններին թաղել են բարձրավանդակ տեղերում: Հայտնի է նաև, որ նրանց գերեզմանները պաշտամունքի առարկա են եղել ժողովրդի մեջ³: Ինչ վերաբերում է Մուրոյի այն պատճառաբանությանը, թե լենինին բարձր տեղ են թաղել, որ «արևուց մոտ էզնի», ապա դրա մեջ էլ, թերևս, կարելի լինի գիտել նախնի արևապաշտության հեռավոր մի արձագանքը:

¹ Ա կ ս ե լ Բ ա կ ու ն ց, Երկեր, Երևան, 1955, էջ 267:

² Նույն տեղում, էջ 268:

³ Մ. Արեոյան, Հայ ժողովրդական առասպելներ, Վաղարշապատ, 1899, էջ 237—239, Տե՛ս նաև Նույն հեղինակի «Հայոց հին գրականության պատմության» մեջ, գիրք Ա, Երևան, 1944, էջ 21:

Իր բովանդակության վիպական-հրաշապատում մոտիվներով, բարբառային լեզվով, պատմելիաձևով և Լենինի կերպարի բուն ժողովրդական ընկալումով ու պատկերումով, քննության առարկա հեքիաթ-ավանդությունը տիպիկ բանահյուսական երկ է։ Իր վերոհիշյալ կողմերով այն, իրոք, հիշեցնում է «Լենին փաշա» ժողովրդական ասքը և առհասարակ ավանդական հեքիաթները, վեպերն ու զրույցները։ Եվ դա բնական ու հասկանալի է։ Թե՛ «Լենին փաշան» և թե՛ Մուրոյի «զրույցը» սերում են հայ բնաշխարհիկ բանահյուսության երկու կարևոր օրրաններից և կապված են «Սասնա ծռերը» ստեղծող վիպասանական դպրոցի մերօրյա երկու ներկայացուցիչների անունների հետ։ Առաջինի հորինողը, ինչպես նշվեց վերևում, խիղանցի գզրար Մաղկի Սեփոն է, իսկ երկրորդինը՝ սասունցի հովիվ Մուրոն։

3

Լենինի կյանքն ու գործը պատկերելու համար հայ ժողովրդական գուսաններն ու ասացողները ձգտել են գտնել և գտել են համապատասխան արտահայտչական միջոցներ, բանաստեղծական պատկերավորման կենդանի ու գունեղ ձևեր։

Առաջին հերթին պետք է նշել Լենինին նվիրված ստեղծագործությունների մեջ օգտագործված գեղարվեստական մակդիրները։ Դրանցից շատերը աչքի են ընկնում իրենց նկարեն և հուզական հատկություններով և հիանալիորեն բացահայտում են Լենինի մտքի ու հանճարի ամենատիպական հատկանիշները, միաժամանակ ընդգծելով ժողովրդի հույզերի ու մտորումների հարազատ թարգման գուսանների, երգիչների ու ասացողների վերաբերմունքը նրա նկատմամբ։ Այդպիսի մակդիրներից են հետևյալները. արև ու լույս, աչքի լույս, վառ արշալույս, մեծ խրախույս, անթառամ բույս, կարմիր լալա, բարձր սար, անուշ բար, հիմքի քար. իմաստուն, ծով խելք, շնորքի ծով, անգին, անմահ, արժանավոր, քաջ, ազնիվ, գովական, պատվական. հավատ ու հույս, մեծ հոգի, բարի խղճով, դարդի դարման, դեղ ու ճար, խեղճի-նաչարի տեր, հարազատ ծնող. ասլան բալա, պայծառ ճրագ, սիրելի, պաշտելի, անմահ, մեծ և այլն¹։

Բանաստեղծական պատկերավորման մյուս ձևը, որ լայնորեն կիրառված է Լենինյան երգերի, խաղերի և այլ ստեղծագործությունների մեջ, դա գեղարվեստական համեմատություններն են։ Լենինի կյանքի ու գործի այս կամ այն կողմը պատկերելու համար ժողովրդական գուսաններն ու վիպասանները հաճախակի դիմում են շրջապատի բնությանը, համեմատության նյութ վերցնելով այնտեղից։ Այդպիսի համեմատությունների ցայտուն օրինակներ են հետևյալները.

«Լենինն եկավ ինչիս պագե,
Մե ազատեց շատ սթամեռ²,
Կամ՝

«Լենին փաշի գուրքը թափավ քանց զմուրեխ.
Քանց բհաբու սել ր սելավ գետ վարարած.

¹ «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, և այլուր։

² Նույն տեղում, էջ 61։

Քանց գուլանի վարար կարկուտ. զինչ պատուխաս,
 Քանց զծովու ֆոթունի պես առդ ր ասման,
 Քանց սամելի... երկինք, գետինք իրուր խառնվան...»¹,

Լենինյան երգերի ու խաղերի, հեքիաթների ու զրույցների մեջ օգտագործված են նաև բանաստեղծական պատկերավորման այլ ձևեր, որոնք բնորոշ են ավանդական բանահյուսության համար և գալիս են խոր հնությունից: Դրանցից է, այսպես կոչված, հոգեբանական զուգահեռականությունը, որը հիմնված է մարդու և բնության զգայական նույնացման վրա: Ելնելով բնության երևույթներից, հայ ժողովրդական գուսաններն ու վիպասանները՝ զուգադրման միջոցով բացահայտում են Լենինի հերոսական կյանքի ու գործի առանձին դրվագները:

Այսպես, օրինակ, ցարական Ռուսաստանի մռայլ պայմաններում Լենինի երևան գալը, նրանք զուգադրում են ամպի ծայրից ծագող արևի հետ.

«Արև ծաթեց ասբի ծերեն,
 Լենին մեղի եկավ տերեն»²:

Մի ուրիշ անգամ, նրանք Լենինի գալուստը զուգադրում են գարնան անուշ զեփյուռին, իսկ իրեն Լենինին էլ՝ գարնան ավետաբեր ծիծեռնակի հետ.

«Քամին կուգեր ինչ անուշ էր,
 Լենինն եկավ զարա զուշ էր»³:

Ուղիղ զուգահեռականության գեղեցիկ նմուշների հետ միասին Լենինյան երգերի ու խաղերի մեջ առկա են նաև այսպես կոչված բացասող հոգեբանական զուգահեռականության հաջող օրինակներ, երբ բնության և մարդկային կյանքի զուգադրման մեջ ժխտվում է զուգադրված երևույթների նույնությունը, որով և ընդգծվում է ստեղծագործության հիմնական գաղափարը: Ցայտուն է այս տեսակետից վերևում բերված ժողովրդական երգի հետևյալ քառյակը, որի մեջ աշխատավոր ժողովրդի մինչ Հոկտեմբերյան շրջանի կյանքի ծանր պայմանները բացահայտված է ծովի ու ծարավի իրար բացասող պատկերների միջոցով:

«Աշխարհը մե ծով էր,
 Մենք մեջը ծարավ.
 Լենինի գործերով,
 Տեսաք ինչ դառավ...»⁴:

Բանաստեղծական պատկերավորման ձևերից ոչ պակաս բազմազան ու հարուստ է նաև քննության առարկա երգերի ու խաղերի տաղաչափությունն ու հանգավորումը:

Լենինյան երգերի մեջ մենք գտնում ենք հայ ժողովրդական երգերին հատուկ զրեթե բոլոր տաղաչափական ու հանգավորման ձևերը. պարզ ու բարդ ոտքերով, շեշտված ու անշեշտ վանկերով ոտանավորներ. հինգ վանկանի եռյակներ ու ֆառյակներ (եռյակների երեք տողն էլ նույնահանգ, իսկ քառյակներինը՝ առաջին, երկրորդ և չորրորդ տողերը նույնահանգ, երրորդ տողն՝ ան-

¹ «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, էջ 136:

² Նույն տեղում, էջ 66:

³ Նույն տեղում, էջ 65:

⁴ Նույն տեղում, էջ 86:

հանգ), յոթ վանկանի մեծ ու փոքր խաղեր (առաջին, երկրորդ և չորրորդ սուղերը նույնահանգ, երրորդ տողն՝ անհանգ), ութ վանկանի ֆառյակներով խաղեր (թուր տողերն էլ նույնահանգ կամ հաջորդաբար զուգահանգ), առաջին և երրորդ տողերը վեց վանկանի, իսկ երկրորդ և չորրորդ տողերը հինգ վանկանի ֆառյակներ (հնգավանկ տողերը նույնահանգ, վեցավանկերը անհանգ), յոթ և ութ վանկանի տողերով նույնահանգ եռյակներ և կամ երրորդ տողն անհանգ ֆառյակներ, տասը վանկանի տողերով երկյակներ, եռյակներ և հատկապես ֆառյակներ և այլն:

Լենինին նվիրված գուսանական և ժողովրդական երգերը աչքի են ընկնում ոչ միայն կենդանի ու գունեղ պատկերներով, ինքնատիպ համեմատություններով, վառ մակդիրներով, տաղաչափական ու հանգավորման բազմազան ձևերով, այլև հայ ժողովրդական մեղեդիների բազմադարյան գանձարանից վերցված սրտառուչ ու հուզիչ եղանակներով:

Ինչպես ընդհանրապես սովետահայ բանահյուսության, այնպես էլ վերջինիս ամենակարևոր բաժինը կազմող լենինյան ստեղծագործությունների մեջ, ինչպես տեսանք, վարպետորեն օգտագործված են ավանդական հայ բանահյուսության արտահայտչական մի շարք միջոցները: Ցայտուն է այս առումով հատկապես «Լենին փաշայի» օրինակը, ուր առավել նկատելիորեն դրսևվորված է «Սասունցի Դավթի» ազդեցությունը. վերջինիս ընդհանուր շունչը, չափն ու թափը, հանգավորման ձևերը, վիպական բնորոշ կրկնությունները, չափազանցությունները և այլն: «Լենին փաշայի» կապը «Սասունցի Դավթի» հետ առանձնապես աչքի է ընկնում ինչպես առանձին բառերի, տողերի, այնպես էլ բանաստեղծական ավելի մեծ միավորների երանգավոր կրկնությամբ: Ասքի գրեթե բոլոր դրվագներում, սկզբից մինչև վերջ, մենք գտնում ենք «Սասունցի Դավթի» հիշեցնող վիպական կրկնության այլևայլ ձևեր: Բնորոշ է այս տեսակետից Լենինին հետևող հազարավոր ընչազուրկների զորահավաքի նկարագրությունը:

«... Անու ետվեն պանվուր կնաց խազար-խազար.

Անու ետվեն որչպար կնաց խազար-խազար.

Անու ետվեն անտուն, քաղցած խազար-խազար.

Անու ետվեն անկուռծ, հսիր խազար-խազար.

Անու ետվեն անխուզ-անճուր խազար-խազար...

Պոնին զաշար, զրսար, զրքար, զրմեն դեխեն.

Պոնին ծորիր, քար, զրկապան զրմեն դեխեն.

Պոնին գետիր, մերի, չընդլ զրմեն դեխեն.

Պոնին տաշտիր, զառտ ր պախիզ զրմեն դեխեն.

Պոնին արուտ, շայիր-չիման զրմեն դեխեն.

Պոնին զըծով, հախպուր, օրման զրմեն դեխեն...»¹:

Հին արտահայտչական միջոցների առկայությունը, սակայն, լենինյան ստեղծագործություններում, ինչպես և ողջ սովետահայ բանահյուսության մեջ, չի կասեցրել նոր արտահայտչական միջոցների ստեղծումը: Այստեղ մենք տեսնում ենք նաև նոր պատկերներ ու համեմատություններ, նոր չափեր ու հանգեր, նորոգ երաժշտական եղանակներ, որոնք բխում են Լենինին նվիրված գործերի նոր բովանդակությունից և համահնչուն են այդ բովանդակու-

¹ «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936, էջ 134:

թյանը: Դրանք առկա են հատկապես այն ուսանավոր-ասմունքների մեջ, որոնց հեղինակները ժամանակակից ինքնուս-հորինողներն են:

Լենինին նվիրված բանահյուսական ստեղծագործությունները, սովետահայ բանահյուսության մյուս բոլոր գործերի հետ միասին, արտացոլում են հայոց լեզվի մեջ վերջին երեք տասնամյակների ընթացքում կատարված փոփոխությունները. ժողովրդական բարբառների առկայության փաստը, նրանց հետըզհետե վերացումը և համաժողովրդական խոսակցական և գրական լեզուների աստիճանական հաղթանակը:

20-ական և 30-ական թվականներին վերաբերող բանահյուսական ստեղծագործությունները, իբրև ընդհանուր երևույթ, հիմնականում, հորինված են արևելահայ և արևմտահայ մի շարք բարբառներով ու ենթաբարբառներով, որով խոսել է այդ շրջանում Սովետական Հայաստանի տարբեր շրջանների գյուղական բնակչությունը: Բնորոշ են, այս տեսակետից, այդ թվականներին հորինված «Լենին փաշան» և Մուրոյի «գրուցը», որոնցից առաջինի լեզուն խիզանցոց բարբառն է, խճողված բազմաթիվ օտար բառերով, իսկ երկրորդինը՝ սասունցոց բարբառը:

40-ական և 50-ական թվականների ստեղծագործությունների լեզվի մեջ որոշակի կերպով նկատվում է բարբառային տարրի նվազումը և ընդհանուր, համաժողովրդական ու գրական լեզուների բառերի ու քերականական ձևերի գերակշռումը: Այդպիսիք են ժամանակակից գուսանների և ինքնուս-հորինողների ստեղծագործություններից շատերը:

Լենինի մասին հայ ժողովրդի ստեղծած չափածո ու արձակ լավագույն հորինվածքները, նրա վերջին քառասնամյակի բանավոր ստեղծագործության, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթի ինքնատիպ նմուշներից են: Դրանց մեջ աշխատավոր հայ ժողովուրդը դրել է իր բանաստեղծական տաղանդի դրոշմը, արտահայտել իր նվիրական հույզերն ու մտորումները, իր խորը երախտագիտությունը այն մարդու նկատմամբ, որը փրկեց նրան վերահաս կործանումից, վերադարձրեց նրան դարերով բռնադատված իր անկախությունն ու կորցրած պետականությունը, հիմք դրեց նրա ազգային վերածննդին: Այդ ստեղծագործությունները հարազատորեն արտացոլում են հայ ժողովրդի մտաշխարհը և բխում են նրա կեցությունից՝ պատմական տվյալ ժամանակաշրջանում: Դրանք աչքի են ընկնում Լենինի պատմական դերի բուն ժողովրդական ըմբռնման ճշմարտացի վերարտադրությամբ և վկայում են աշխատավոր ժողովրդին հատուկ պատմական զնահատականների հրատակության, նրա դատողությունների ճշգրտության մասին: